



European Union

Delegation of the European Commission to Armenia



Նախնական տարբերակ/11.11.2012 դրությամբ/

Հայաստանի Հանրապետությունում
Հաշմանդամություն ունեցող անձանց իրավիճակը.
մատչելիություն և զբաղվածություն
Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

2012թ.

Հապավումներ և Սահմանումներ

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն

ՀՈԱ` հաշմանդամություն ունեցող անձ/անձինք

ՀՀ ԱՍՀՆ` ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Անփոփ նկարագիր

Սույն փաստաթուղթը պատրաստվել է «Ամեն ինչ մեզ համար՝ մեզ հետ» ծրագրի շրջանակներում: Իրականացնողը «Լիարժեք կյանք» բարեգործական հասարակական կազմակերպությունն է՝ «Փարոս», «Աստղացույց», «Լուսաստղ», «Թալին-Հույս» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ: Ծրագիրը ֆինանսավորում է Եվրոպական միությունը: Սույն փաստաթղթում արտահայտված տեսակետները որևէ կերպ չեն արտացոլում Եվրոպական միության դիրքորոշումը

Ծրագրի ընդհանրական նպատակն է նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը՝ քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական արժեքների տարածման, հետևողական գործողությունների միջոցով:

2 տարի առաջ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ՄԱԿ կոնվենցիան՝ պարտավորվելով համապատասխանեցնել տեղական օրենսդրությունը Կոնվենցիայի պահանջներին: Ջեկույցի ստեղծման հիմնական նպատակն էր վերլուծել հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, որոնցից շատերն ընդունվել էին մինչև վերոնշյալ փաստաթղթին միանալը, և պարզել, վավերացումից հետո ձեռնարկվել են արդյոք գործնական քայլեր՝ տեղական օրենսդրության համապատասխանեցման ուղղությամբ: Գաղտնիք չէ, որ ոլորտը կարգավորող բազմաթիվ օրենքներ և շատ դրույթներ, այնուամենայնիվ, ձևական բնույթ են կրում, լիարժեքորեն չեն կիրառվում՝ խոչընդոտելով նպաստավոր դաշտի ձևավորմանը հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ հավասար պայմանների ստեղծման առումով:

Օրենսդրության, ինչպես նաև, փորձագիտական վերլուծության և քանակական հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց համար դեռևս լուրջ խնդիր է զբաղվածությունն ու մատչելի միջավայրը, որի ուղղությամբ փաստացիորեն արդյունավետ քայլեր չեն ձեռնարկվել, ոլորտի պատասխանատուները կարծիք են հայտնում, որ մեր երկրում հավասար հնարավորությունների ապահովմանը միտված պետական քաղաքականությունը դեռևս հեռու բավարար լինելուց, / մանրամասները տե՛ս 2.2 կետում /**Հարցազրույցների որակական և քանակական հետազոտության բացահայտումներ և արդյունքներ**//, հարկավոր են լուրջ և գործնական օրենսդրական բարեփոխումներ այս ուղղությամբ:

Ջեկույցը նպատակ ունի պարզելու Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավական, մատչելիության, որակյալ և մատչելի կրթության, բժշկական օգնության և զբաղվածության ապահովման վիճակը, ներկայացնելու իրավիճակային վերլուծությունները և դրանց հիման վրա՝ մշակել առաջարկություններ: Փաստաթղթի մշակման ժամանակ ուսումնասիրություն է կատարվել և *դիտարկվել են* պաշտոնական կայքեր, մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական փաստաթղթեր: Այսպիսով՝ վստահաբար կարելի է նշել, որ սույն հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ վերջին տարիներին Հայաստանում որոշակի ոլորտներում դրական տեղաշարժեր են նկատվում հաշմանդամություն ունեցող անձանց իրավական պաշտպանության առումով, թեև բազմաթիվ չլուծված խնդիրներ կան՝ հասարակության անհանդուրժողականությունից մինչև պետական

քաղաքականության թերի ընթացակարգեր: Անկասկած, վերոնշյալ խնդիրների լուծմամբ հաշմանդամություն ունեցող անձանց կյանքը Հայաստանում էապես կփոխվի: Սակայն դրա համար անհրաժեշտ է ճիշտ գնահատել ներկա իրավիճակը և առկա մարտահրավերները: Ուստի ստորև ներկայացվում է զեկույցն ամբողջությամբ:

Ընդհանուր տեղեկություններ

«Լիարժեք կյանք» ՀԿ-ը հիմնադրվել է 1998 թ. հուլիսի 17-ի խորհրդանշական օրը, երբ, ըստ Աստվածաշնչի, Նոյյան տապանը հանգրվանեց Արարատ լեռան գագաթին՝ մարդկությանը պարզելով կյանքը վերսկսելու նոր հույս և հնարավորություն: Մենք հավատում ենք, որ յուրաքանչյուր անձ պետք է ունենա լիարժեք կյանքի հնարավորություն, այնպես, ինչպես յուրաքանչյուր թռչուն վայելելում է ճախրանքի հաճույքը:

Կազմակերպությունը հիմնադրվել և ղեկավարվում է հաշմանդամություն ունեցող անձանց կողմից: Տարիների մեր անցած ուղին և հաջողություններն այն գորեղ փաստարկներն են, որ անհերքելիորեն վկայում են՝ հաշմանդամությունը չի կարող խոչընդոտել հասարակական կյանքին ակտիվ մասնակցությանը: «Լիարժեք կյանք» բարեգործական հասարակական կազմակերպության առաքելությունն է կրթական, իրավական, առողջապահական, սոցիալական և շատ այլ ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությունը, հզորացումը և առավելագույնս ներգրավումը՝ հանրային քարոզչության, տեղեկատվական ծառայությունների միջոցով:

Ա. Ներածություն

1. Գնահատման նպատակը
2. Կիրառված մեթոդաբանությունը

Բ. Գնահատման արդյունքները

1. Ծրագրի նկարագիր
2. Գործողության նկարագիր
3. Արդյունքները

Գ. Եզրահանգումներ

1. Այլ խնդիրներ
2. Առաջարկներ

Հավելվածներ

<i>Հավելված 1՝</i>	Հարցազրույցների համար մշակված հարցաշար
<i>Հավելված 2</i>	Հարցազրույցի մասնակիցների ցանկ
<i>Հավելված 3</i>	Փորձագիտական հարցմանը մասնակցած փորձագետների ցանկ
<i>Հավելված 4</i>	ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆԻ և ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐՆԵՐԸ
<i>Հավելված 5</i>	Դաշտը կարգավորող օրենսդրություն համապատասխան հոդվածներով
<i>Հավելված 6</i>	<i>ՀՀ հաշմանդամության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի վերլուծություն</i>

Ա. Ներածություն

1. Գնահատման նպատակն է՝

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավական վիճակի, մատչելիության, որակյալ և մատչելի կրթության, բժշկական օգնության և զբաղվածության ապահովման ուսումնասիրություն, վերլուծություն և առաջարկությունների մշակում:

2. Կիրառված մեթոդաբանություն

Հետազոտության համար ընտրվել և կիրառվել են հետևյալ մեթոդները.

1. Էլեկտրոնային կայքերի ուսումնասիրություն՝ *դիտարկվել են*
<http://www.disabilityarmenia.am> ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ստեղծած կայքը/
<http://www.mss.am> / ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքը/
<http://www.edu.am> / ՀՀ Կրթության և գիտության նախարարության կայքը/

2. Հիմքեր հանդիսացող փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն: Որպես փաստաթղթեր ծառայել են՝

I. «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 1993 թ.

II. «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք, 2006թ.

III. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, 2006 թ.

IV. «Հաշմանդամների իրավունքների և արժանապատվության պաշտպանությանն ուղղված միջոցառումների հայաստանյան օրակարգ» իրավական վերլուծություն ՀՀ օրենսդրական դաշտի և միջազգայնորեն ընդունված սկզբունքների և ստանձնած պարտականությունների համապատասխանեցման շուրջ, 2006 թ.

V. Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամության հիմնախնդիրների վերաբերյալ ազգային զեկույց, 2012 թ.

VI. «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի հիմնախնդիրների լուծման ուղիները քաղաքաշինական միջավայրում՝ գիտական թեմատիկ աշխատանք, 2005-2007 թթ. / ՄԻՐԵԿԱՆ ՕՀԱՆՅԱՆ, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի Քաղաքաշինության ամբիոնի վարիչ

3. Տեղեկության հավաքագրում

1. Փորձագիտական հարցազրույցների անցկացում / վերլուծություն

Տեղեկության հավաքագրում ոչ ձևայնացված բաց հարցերով:

Փորձագիտական հարցման հիմնական նպատակն է պետական և հասարակական կառույցներից ստանալ առավել մասնագիտական, հիմնավորված տեղեկություններ հաշմանդամության ոլորտում առկա հիմնախնդիրների և պետական քաղաքականության իրականացման վերաբերյալ, որը քանակական հարցման արդյունքների հետ միասին կտա առավել համակողմանի պատկեր:

Հարցման են ենթարկվել ՏԻՄ-երի, սոցիալական, կրթական ոլորտներում գործունեություն ծավալող պետական կառույցների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ Լոռու, Շիրակի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերից՝ ընդհանուր թվով 29 մարդ:

Հարցազարում տեղ են գտել հարցեր իրավական, շրջակա միջավայրի / մատչելի տեղաշարժի/, կրթության, առողջապահության, զբաղվածության, մշակույթի, սոցիալական ոլորտներում առկա խնդիրների վերաբերյալ, որոնց առնչվում են հաշմանդամություն ունեցող անձինք, նաև իրականացվող պետական քաղաքականության ու ծրագրերի մասին

2. քանակական հարցումների անցկացում թիրախ խմբի հետ /վերլուծություն

Տեղեկության հավաքագրում անանուն հարցաթերթիկների միջոցով

Հարցման նպատակն է հաշմանդամություն ունեցող անձանցից ստանալ իրական, հիմնավոր տեղեկություններ՝ իրենց առօրյայից, կենցաղի ու կյանքի տարբեր ոլորտներից, որը փորձագիտական հարցման արդյունքների հետ միասին կտա առավել համակողմանի պատկեր:

Հարցումն իրականացվել է Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերի հետևյալ 19 քաղաքային համայնքներում՝ Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր,

Ալավերդի, Մպիտակ, Ախթալա, Շամլուղ, Թումանյան, Գյումրի, Մարալիկ, Արթիկ,

Աշտարակ, Ապարան, Թալին, Գավառ, Մարտունի, Սևան, Վարդենիս և Ճամբարակ:

Հարցման մեջ ընդգրկվել են վերոնշյալ համայնքների հաշմանդամություն ունեցող 526

բնակիչներ: Ընտրությունը կատարվել է համակարգչային ծրագրով պատահական

ընտրությամբ՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության

տրամադրած ցուցակներից:

Բ. Գնահատման արդյունքներ

1 Գործողության նկարագիր

<http://www.disabilityarmenia.am> ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ստեղծած կայք/,

<http://www.mss.am> //ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայք/,

<http://www.edu.am> /ՀՀ Կրթության և գիտության նախարարության կայք/

Նշված կայքերում տեղադրվում են հաշմանդամության ոլորտին վերաբերող նյութեր՝ գործող /միջազգային և ազգային/ իրավական ակտերը, մշակվող իրավական ակտերի նախագծերը, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նիստերի մասին նյութերը, տեղեկություններ ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների և նրանց կողմից իրականացվող միջոցառումների մասին: Կայքերում ներկայացված է տեղեկություն իրականացվող պետական և հասարակական կազմակերպությունների որոշ ծրագրերի վերաբերյալ: Այս ամենով հանդերձ՝ ցանկալի կլիներ, կայքերի ավելի հաճախակի թարմացումները:

2 Արդյունքներ

2012թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված է հաշմանդամություն ունեցող 177.076 մարդ./ ՀՈւԱ/ որից շուրջ 8000-ը՝ երեխաներ: Դա նշանակում է, որ 177.076 մարդու համար անհրաժեշտ է ստեղծել մատչելի պայմաններ, ապահովել նրանց սոցիալական պաշտպանությունը, պաշտպանել նրանց իրավունքները կյանքի բոլոր ոլորտներում: Այսինքն, անել այն, ինչը կապահովի հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումը:

Հայաստանի Հանրապետությունը վերջին տարիներին որդեգրել է հաշմանդամության սոցիալական մոդելի վրա հիմնված քաղաքականություն, ինչը ենթադրում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովում, հավասար պայմանների ստեղծում:

Մեր երկրում հաշմանդամության ոլորտում տարվող աշխատանքները նպատակաուղղված են ՀՈւԱ -ների սոցիալական պաշտպանությանը բոլոր բնագավառներում (իրավական, տնտեսական, շրջապատող միջավայր և այլն), ՀՈւԱ -ների համար երկրի մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելուն, կենսագործունեության բոլոր ոլորտներում նրանց համար հավասար պայմանների ստեղծմանն ու հավասար հնարավորությունների ապահովմանը:

Հնարավորինս հավասար պայմաններ ստեղծելու համար միջավայրի մատչելիության ապահովման հետ զուգընթաց կարևոր է նաև հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, հոգեբանական, մասնագիտական վերականգնման լիարժեք կազմակերպումը, ինչը կնպաստի ՀՈւԱ -ների անձանց կրթության, զբաղվածության և հասարակական գործընթացներին ակտիվ մասնակցությանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավական վիճակը

Վերլուծելով հաշմանդամության ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը՝ տեսնում ենք, որ գործող օրենքները հիմնականում սահմանում են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության և ավելի սակավ ներառման պահանջներ:

« Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով /1993 թ/ և հետագայում նրանում կատարված փոփոխություններով երկրում հիմնականում սահմանել են ՀՈԱ -ների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմքերը, հաշմանդամություն ունեցող անձանց հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները, ըստ որի հաշմանդամություն ունեցող անձինք ունեն սոցիալ-տնտեսական, քաղաքական և անձնական բոլոր այն իրավունքները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1975 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունած Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին հռչակագրում, ՄԱԿ-ի 1993 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմաններ ապահովելու Ստանդարտ կանոններում», Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում, օրենքներում և օրենսդրական այլ ակտերում:

Գործող օրենքի համաձայն հաշմանդամություն ունեցող են համարվում այն քաղաքացիները, որոնք մտավոր կամ ֆիզիկական անլիարժեքությամբ պայմանավորված՝ կենսագործունեության սահմանափակումների պատճառով սոցիալական օգնության և պաշտպանության կարիք են զգում:

Անձի կենսագործունեության սահմանափակումներ են համարվում կողմնորոշման ու տեղաշարժման, հաղորդակցման, սեփական վարքագծի վերահսկման, ինչպես նաև աշխատանքային գործունեությամբ զբաղվելու ունակության լրիվ կամ մասնակի կորուստը:

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ներառելուն ուղղված և նրանց սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մի շարք իրավական ակտեր:

- ՀՀ կառավարության 2005 թ. նոյեմբերի 3-ի նիստի N 44 արձանագրության 1-ին կետով հավանություն է տրվել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարությանը, որում ամրագրված են նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման խնդիրները, նպատակը և դրան հասնելու ուղիները:

- ՀՀ վարչապետի 2008 թվականի որոշմամբ ստեղծվել է Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով, հաստատվել է նրա կազմն ու աշխատակարգը:

- ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարի հաստատում է Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության տարեկան ծրագիրը, որը սահմանված կարգով «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի կազմում ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով:

- ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N 392-Ն որոշմամբ հաստատվել է

« Հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը: Նույն որոշմամբ միաժամանակ հանձնարարվել է ՀՀ Քաղաքաշինության նախարարությանը ապահովել շենքերի և շինությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի համար, շինարարական նորմերի մշակումը և սահմանված կարգով գրանցումը:

- ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 16-ի N 392-Ն որոշման 2-րդ կետի համաձայն ՀՀ Քաղաքաշինության նախարարության պատվերով «Քաղաքաշինության ԳՀԻ» ՓԲԸ-ի կողմից մշակվել է «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» ՀՀ շինարարական նորմերը, որոնք ՀՀ Արդարադատության նախարարության կողմից պետական գրանցում է ստացել 28.12.2006 թ. և գործողության մեջ է դրվել 2006 թվականից :

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում ՀՀ կառավարությունը սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց համար կենսագործունեության միջավայրի մատչելիությունն ապահոող նորմեր և կանոններ:

- 2005 թվականին ընդունվել է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց՝ իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան կրթություն ստանալու իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը:

Հանրապետությունում ներդնելով ներառական կրթության մոդելը, ապահովվել է 1700 հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մատչելի և որակյալ կրթություն ստանալու իրավունքը:

ՀՀ Կրթության և գիտության նախարարության, «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների աջակցությամբ հանրապետության 85 դպրոցում ներառական կրթությունը մտել է հանրակրթության կյանք: Մեկնարկել է Տավուշի մարզում ամբողջական ներառական համակարգի ներդրման ծրագիրը:

Ներառական դպրոցներում ստեղծվել են մեդիակամուրներ և աշակերտական խորհուրդներ, կազմակերպվել են կարողությունների զարգացման սեմինարներ՝ խորհրդի անդամների համար:

Հանրապետության 24 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է շուրջ 2700 երեխա:

Հաշմանդամության ոլորտում ամենաարդիական և ամենադժվար լուծվող խնդիր է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքով ապահովելու հարցը:

Զբաղվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման և ինքնուրույնության կարևոր տարրերից մեկն է:

Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքով ապահովելու, զբաղվածությունը խթանելու հարցերը կանոնակարգվում են 2005 թ. ընդունված «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, որը կարգավորում է ՀՀ բնակչության զբաղվածության իրավական հիմքերը, բնակչության զբաղվածության եւ գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, աշխատանքի եւ զբաղվածության ազատ ընտրության եւ գործազուրկների սոցիալական պաշտպանության պետական երաշխիքները:

Նշված օրենքի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձինք, եթե չեն աշխատում համարվում են աշխատանք փնտրող, սակայն գործազուրկի կարգավիճակ ստանալ չեն կարող: Սա, անշուշտ, խտրական մոտեցում է:

Բնակչության զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերում, որոնք ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվում և ներկայացվում են կառավարություն՝ տվյալ տարվա պետական բյուջեի կազմում ներառելու համար, արտացոլվում են ոլորտի բոլոր պետական ծրագրերը:

Սոցիալական պաշտպանության լրացուցիչ երաշխիքների իրավունք ունեն աշխատանքի տեղավորման գործում դժվարություններ կրող եւ աշխատաշուկայում հավասար մրցակցության անընդունակ աշխատանք փնտրող, չզբաղված անձանց որոշակի խմբեր, մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձինք:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար գործում են զբաղվածության հետևյալ պետական ծրագրերը՝

- 1) աշխատատեղի հարմարեցում,
- 2) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար տրամադրվող ֆինանսական աջակցություն,
- 3) աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցումը գործատուին,
- 4) մասնագիտական ուսուցումը, աշխատանքային ունակությունների վերականգնումը,
- 5) վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպումը,
- 6) գործատուի մոտ աշխատանքային պրակտիկայի կազմակերպում և այլն:

Վերջին տարիներին հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը խթանելու նպատակով կատարվել են օրենսդրական փոփոխություններ, մշակվել և իրականացվում են նոր ծրագրեր:

2012թ. հունվարի 1-ի դրությամբ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային կենտրոններում գրանցված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը 1290 է՝ 2011թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված 1204-ի համեմատ:

2011թ.-ի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց Մասնագիտական ուսուցում ծրագրում ընդգրկվել է հաշմանդամություն ունեցող 118 անձ, որոնցից աշխատանքի է տեղավորվել 14-ը:

«Աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին» ծրագրում ընդգրկվել է հաշմանդամություն ունեցող 116 անձ:

«Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդամություն ունեցող անձանց ֆինանսական աջակցության տրամադրում» ծրագրի շրջանակներում ընդամենը հաշմանդամություն ունեցող 4 անձ է գրանցվել որպես անհատ ձեռնարկատեր:

«Գործազուրկներին այլ վայր աշխատանքի գործուղելու կապակցությամբ նյութական ծախսերի հատուցում» ծրագրով աշխատանքի է գործուղվել հաշմանդամություն ունեցող 1 անձ:

«Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատատեղերի հարմարեցումը գործատուի մոտ» ծրագրի շրջանակներում հարմարեցվել է 11 աշխատատեղ:

Հանրապետությունում կազմակերպվել են ՝ Աշխատանքի տոնավաճառներ⁶, որոնց մասնակցել են թե՛ հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներով զբաղվող հասարակական և այլ կազմակերպություններ, թե՛ հաշմանդամություն ունեցող անձինք:

Բացի իրականացվող պետական ծրագրերից, ծրագրեր են իրականացվում նաև միջազգային համագործակցության արդյունքում:

2010 թվականի հունվարից HDP հիմնադրամի կողմից իրականացնում է «Հաշմանդամություն ունեցող անձինք Հայաստանում՝ որպես խոստումնալից աշխատուժ» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Նիդերլանդների Արտաքին Գործերի նախարարության կողմից: Ծրագիրն իրականացվում է Երևան քաղաքի Էրեբունի, Նուբարաշեն համայնքներում և Հրազդան քաղաքում:

Նպատակն է աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորմանը, և զբաղվածության ապահովմանն ուղղված նոր մեթոդների և մոտեցումների միջոցով՝ նպաստել նրանց ներառմանը հասարակություն:

Ծրագրի շրջանակներում 2010-2011թթ մասնագիտական կրթություն են ձեռք բերել զբաղվածության պիլոտային 2 կենտրոններում գրանցված հաշմանդամություն ունեցող 41 անձինք: Էրեբունի-Նուբարաշենի և Հրազդանի զբաղվածության կենտրոնների աշխատակիցները աշխատանքի են տեղավորել հաշմանդամություն ունեցող 39 անձի, 2011թ նրանցից 2-ի համար կատարվել է աշխատատեղի հարմարեցում՝ գործատուների մոտ:

2012 թվականի հունվարից «Սեյվ դը չիլդրեն» միջազգային կազմակերպության կողմից իրականացվում է «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավումը զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագիրը: Ծրագիրն ընդգրկում է Երևանը և հանրապետության 4 մարզերը՝ Արարատը, Գեղարքունիքը, Շիրակը և Լոռին, որտեղ առավել շատ է հաշմանդամություն ունեցող անձանց թիվը:

Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությամբ ապահովելու հավակնոտ այս ծրագրի շրջանակներում Հայաստան են ներմուծվել նոր սարքավորումներ, որոնք կգնահատեն Հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորությունները՝ որոշելով, թե ինչ աշխատանք կարող են նրանք կատարել, ըստ այդմ էլ կորոշվի, թե որ ոլորտում կարելի է նրանց ներգրավվել:

«Այդ սարքի միջոցով հնարավոր է չափել ցանկացած տիպի հաշմանդամություն ունեցող մարդու մտավոր և ֆիզիկական ունակությունները, անգամ ձեռքի կարողությունները: Վերջում սարքը տալիս է աշխատանքների տեսակների մի ցուցակ, որը հաշմանդամություն ունեցող տվյալ անձը կարող է կատարել, որի շրջանակներում

էլ, նախասիրություններից էլնելով, հնարավոր է որոշել՝ ինչ աշխատանք փնտրել նրա համար: LIFE ծրագիրը գործելու երեք տարի՝ 2012-2015 թվականների ընթացքում և ակնկալվում է, որ 20 տոկոսով կավելանա այն գործատուների թիվը, ովքեր աշխատանքի կհրավիրեն հաշմանդամություն ունեցող անձանց, իսկ շուրջ 400 ՀՈւԱ-ներ էլ կվերատրաստվեն:

Իրականացվող ծրագրերը, սակայն, դեռևս բավարար չեն՝ լիովին լուծելու ՀՈւԱ-ների զբաղվածության հիմնախնդիրը: Դժվարություններ է առաջանում հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային կարողությունների գնահատման, աշխատատեղերի հարմարեցման հարցերում:

Հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական Գյումրու կենտրոնը իրականացնում է ՀՈւԱ-ների աշխատանքային կարողությունների գնահատում, խորհրդատվություն թե՛ ՀՈւԱ-ների, թե՛ նրանց ընտանիքի անդամների համար: Կենտրոնն ունի համապատասխան մասնագիտական գույքով կահավորված 4 ուսումնական սենյակներ՝ համակարգչային, կարի, վարսահարդարի, ծաղկի գեղարվեստական ձևավորման: Մասնագիտական խմբերի ղեկավարները ՀՈւԱ-ներին ընտրել են 2010թ.-ի կենտրոնի շահառուներից: Այսօր կենտրոնն ունի 11 հաստիքային և 4 քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներ, որոնցից 6-ը՝ ՀՈւԱ են:

Հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների լուծման նպատակով որոշ ՀԿ-ներ՝ /«Փարոս», «Աստղացույք», «Հայկական ճամբար», «Լիարժեք կյանք»/ հիմնել են սոցիալական ձեռնարկություններ: Դրանք թեև պիլոտային ծրագրեր են, այնուամենայնիվ, բախվում են բազմաթիվ խնդիրների, որոնցից հիմնականը արտադրանքի սպառման հարցն է: Չկա նաև իրավական դաշտ: Հետևաբար սոցիալական ձեռնարկությունները գտնվում են մյուս տնտեսվարողների հետ նույն հարթությունում, չնայած հանգամանքին, որ սոցիալական ձեռնարկությունների գործունեությունն ուղղված է մի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական խնդիրների լուծմանը ու նրանց համար հնարավորինս հավասար պայմանների ապահովմանը, մյուս կողմից նրանց աշխատանքային ներուժը հասարակությանն ի շահ ներդնելուն:

«Ունիսոն»¹ հասարակական կազմակերպությունում զբաղվածության հարցի լուծման ուղղությամբ 2011 թվականին մշտապես գործել է զբաղվածության կենտրոնը, որն աջակցել և անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրել աշխատանք փնտրող ՀՈւԱ -ներին ռեգումմեի կազմման և հարցազրույցի անցկացման գործում:

Միաժամանակ կազմակերպությունը նույն տարվա ընթացքում շարունակել է իր բանակցությունների ընթացքը գործատուների՝ ինչպես խոշոր ընկերությունների, այնպես էլ միջին և մանր ձեռնարկատերերի հետ), շուրջ 300 ՀՈւԱ ներկայումս գրանցված են «Ունիսոնի» տվյալների բազայում՝ որպես աշխատանք փնտրող, 40 ՀՈւԱ-ներ էլ աշխատում են «ՎիվաՄեյ-ՄՏՍ», «Օրանժ-Արմենիա», «Վիվարո» և այլ ընկերություններում:

Զբաղվածության ցուցանիշը մեր երկրում, ցավոք, բավական ցածր է, չնայած ՀՀ գործող օրենսդրությունը պարունակում է դրույթներ, որոնք երաշխավորում են ՀՈւԱ -ների աշխատանքի իրավունքի ապահովումը: Հայաստանում ՀՈւԱ -ների զբաղվածության հիմնախնդիրը կարևորվում է պետական և ոչ պետական

¹ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 զեկույց

ինաստիտուտների կողմից և դիտվում որպես գերակա խնդիր: Այս ոլորտի հիմնական խնդիրներն են՝ օրենսդրության կատարելագործում, ՀՈւԱ -ին աշխատանքի տեղավորման նպատակով գործատուին շահագրգռող դրույթներ պարունակող (աշխատավարձի մասնակի փոխհատուցում և այլն) ծրագրերի ծավալների ընդլայնում, ՀՈւԱ -ների կողմից փոքր և միջին բիզնեսի կազմակերպման գործընթացին պետական աջակցության ցուցաբերում, զբաղվածության այլընտրանքային ձևերի ներդրում և այլն:

Աշխատանքի տեղավորման, մասնագիտական ուսուցման և կողմնորոշման հարցերի վերաբերյալ ծրագրեր են ներկայացնում նաև հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատանքային հատուկ պայմաններ ստեղծելու անհրաժեշտություն կարող է առաջանալ տարբեր իրավիճակներում՝ նոր աշխատակիցների աշխատանքի ընդունման, աշխատանքային վնասվածք ստանալուց հետո աշխատակիցների վերադարձի դեպքում և այլն:

Շատ կարևոր է նաև այն հանգամանքը, որ ոչ բոլոր մարդիկ, որոնք ունեն հաշմանդամություն, աշխատանքային հատուկ պայմանների կարիք ունեն: Հետևաբար աշխատանքային հատուկ պայմանները պետք է ստեղծվեն՝ անհատական մոտեցում ցուցաբերելով, այսինքն՝ աշխատանքային տեղը, աշխատանքային միջավայրը, տվյալ աշխատանքը հաշմանդամություն ունեցող անձի հնարավորություններին և պահանջներին հարմարեցնելով:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ աշխատանքային պայմանների ստեղծման ժամանակ կարևոր է հաշվի առնել համապատասխան մասնագետների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող այն անձի կարծիքը, ում համար ստեղծվում են այդ աշխատանքային պայմանները:

ՀՀ-ում սոցիալական աջակցությունը, համաձայն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի, տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, ընտանիքներին, սոցիալական խմբերին: Նույն օրենքով սահմանված է, որ կյանքի դժվարին իրավիճակը օբյեկտիվ իրավիճակ է, որից դուրս գալ, այնտեղ հայտնված անձը, ընտանիքը կամ սոցիալական խումբն ինքնուրույնաբար դուրս գալ չի կարող: Միաժամանակ օրենքը թվարկում է նաև այն իրավիճակները, որոնք կարող են անձին, ընտանիքին կամ սոցիալական խմբին հասցնել այդ իրավիճակին: Այդ իրավիճակների մեջ է նաև հաշմանդամությունը:

Համաձայն նույն օրենքի՝ սոցիալական աջակցությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, կյանքի դժվարությունները հաղթահարելու կամ մեղմելու, նրանց հիմնական պահանջունքները բավարարելու, հասարակության մեջ ինտեգրվելու, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու նպատակով ընտանիքին տրամադրվող սոցիալական ծառայությունների ամբողջությունն է:

Ելնելով վերոհիշյալից՝ սոցիալական աջակցությունը դիտարկվում է ըստ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված անձի աշխատունակության կորստի, իր կազմում հաշմանդամություն ունեցող անձ ունեցող ընտանիքի, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական խմբի սոցիալական կարիքների, դրանց բավարարմանն ուղղված՝ համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի:

Հաշմանդամություն ունեցող անձին տրամադրվող սոցիալական ծառայությունները պետք է նպաստեն նրա առողջության վերականգնմանը, նյութական վիճակի բարելավմանը, զբաղվածության կամ ազատ ժամանակի կազմակերպմանը, կրթություն և մասնագիտական ուսուցում ստանալուն, հասարակության մեջ ինտեգրմանը, նրա ընտանիքի աղքատության կրճատմանը:

Սոցիալական ծառայությունների տեսակները սահմանված են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով և համապատասխան հիմքերի առկայության դեպքում հաշմանդամություն ունեցող անձը կամ նրա ընտանիքը ստանում են համապատասխան սոցիալական ծառայությունը:

Ներկայումս ՀՈւԱ -ներից առավելապես աջակցության կարիք ունեն առաջին խմբի ՀՈւԱ -ները (ըստ աշխատունակության կորստի աստճանի՝ 80% և ավելի), ինչպես նաև մինչև 18 տարեկան ՀՈւԱ -ները (կողմնակի խնամքի կարիք ունեցող)՝ «Հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող անձինք:

Ընտանիքում նման ՀՈւԱ ունենալու պարագայում նրանց խնամքի կազմակերպման համար, ընտանիքի չափահաս անդամներից մեկը կամ այլ անձ (ՀՈւԱ -ի օգնական կամ սոցիալական պատրոն), պետք է զբաղվի նրա խնամքի հարցերով:

Համաձայն ՀՀ կառավարության 2004 թ-ի մարտի 4-ի N318 Ն որոշման՝ հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն օգտվելու պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն ստանալու, ինչպես նաև անվճար դեղորայք ստանալու հնարավորությունից:

ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի «Բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչները և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշները հաստատելու մասին» N 780-Ն որոշմամբ սահմանված է, որ հաշմանդամության 1-ին խմբի որոշման չափանիշը սոցիալական պաշտպանություն կամ օգնություն պահանջող սոցիալական անբավարարությունն է, որը հետևանք է հիվանդություններով, վնասվածքների հետևանքներով կամ «խնդիրներով» պայմանավորված օրգանիզմի ֆունկցիաների կայուն, խիստ արտահայտված խանգարումով և այլ անձանցից լիակատար կախվածությունը տվյալ հաշմանդամություն ունեցող անձի համար կամ իր կենսագործունեությունն ապահովելու (կամ դրա համար հատուկ պայմաններ ստեղծելու նպատակով) կամ նրա խնամքը կազմակերպելու համար: Որևէ պարագայում առաջին խմբի ՀՈւԱ խնամող ընտանիքին անհրաժեշտ են այլ հավասար պայմաններում լրացուցիչ ֆինանսական միջոցներ, որն ճիշտ կլինի լրացնել հավասար պայմաններ» նպաստի ձևով:

Իր կազմում հաշմանդամություն ունեցող անձ ունեցող աղքատ ընտանիքի ընտանեկան նպաստի իրավունքի ճանաչումը իրականացվում է այդ ժամանակաշրջանում գործող օրենսդրության հիման վրա, որի շրջանակներում ընտանիքների անապահովության գնահատման կարգում հաշվի կառնվի իր կազմում հաշմանդամություն ունեցող անձ ունեցող ընտանիքների աղքատության առաջացման հարցում հաշմանդամության հանգամանքի ազդեցության տեսակարար կշիռը:

Սոցիալական ծառայությունները տրամադրվում է ըստ կարիքի, դրան համարժեք սոցիալական ծառայությունների՝ խնամքի շուրջօրյա, ցերեկային կամ տնային

պայմաններում, մասնագիտացված (բուժհաստատություններ, առողջարանային կազմակերպություններ կամ պրոթեզաօրթոպեդիկ կազմակերպություններ) և այլ կազմակերպություններում:

Սոցիալական ծառայությունը տրամադրելու որոշումը կայացվում է հաշմանդամություն ունեցող անձի (նրա ընտանիքի) կարիքների գնահատման ժամանակ: Հաշվի են առնվում անձի հետաքրքրությունները, նրա առողջական վիճակը, կյանքի դժվարին իրավիճակի առանձնահատկությունները, որում նա գտնվում է, անհատական վերականգնողական ծրագրի բովանդակությունը (եթե այդպիսին կա), այդ սոցիալական ծառայությունների տրամադրման ժամկետները (կարճաժամկետ, երկարաժամկետ), հաճախորդի նյութական հնարավորությունները և այլ օբյեկտիվ հանգամանքներ:

2.2 Հարցազրույցների որակական և քանակական հետազոտության բացահայտումներ/ արդյունքներ

Որակական հետազոտություն/Փորձագիտական հարցումների հետազոտություն,

բացահայտումներ և արդյունքներ

- Հարցման հիմնական նպատակն էր պետական և հասարակական կառույցների ներկայացուցիչներից ստանալ առավել մասնագիտական, հիմնավորված տեղեկություններ հաշմանդամության ոլորտում առկա հիմնախնդիրների և պետական քաղաքականության իրականացման վերաբերյալ, որը քանակական հարցման արդյունքների հետ միասին կտա առավել համակողմանի պատկեր: Փորձագիտական հարցման տեղեկությունները հավաքագրվել են հարցազրույցի եղանակով՝ հարցաշարի օգնությամբ:

Հարցմանը մասնակցել են ՏԻՄ-երի, սոցիալական, կրթական ոլորտներում գործունեություն ծավալող պետական կառույցների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ Լոռու, Շիրակի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերից՝ ընդհանուր թվով 29 մարդ: Հարցաշարում տեղ են գտել հարցեր իրավական, շրջակա միջավայրի / մատչելի տեղաշարժի/, կրթության, առողջապահության, զբաղվածության, մշակույթի, սոցիալական ոլորտներում առկա խնդիրների վերաբերյալ, որոնց առնչվում են հաշմանդամություն ունեցող անձինք, նաև իրականացվող պետական քաղաքականության ու ծրագրերի մասին:

Փորձագիտական հարցման արդյունքում, հարցին՝

- **“Ձեր կարծիքով ՀՀ-ում ՀՈւԱ-ները /հաշմանդամություն ունեցող անձինք/ իրավահավասար քաղաքացիներ են, արդյո՞ք պաշտպանվում են նրանց սահմանադրական իրավունքները”** հարցման 29 մասնակիցներից 28 –ը նշել են, որ սահմանադրորեն իրավահավասար են, սակայն, նրանց իրավունքները, մեծ մասամբ, պաշտպանված չեն իրազեկության պակասի կամ բացակայության պատճառով: Ըստ հարցվողների՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները խախտվում են հիմնականում զբաղվածության, մատչելիության, կրթության ոլորտներում, խախտված է նաև նրանց ընտրական իրավունքը: Ընդամենը 1 հարցվող է կարծիք հայտնել, որ հաշմանդամություն ունեցող անձինք ՀՀ-ում իրավահավասար քաղաքացիներ են, և նրանց սահմանադրական իրավունքները այժմ պաշտպանված են առավել, քան երբևէ՝ դպրոցում, ԲՈւՀ-ում, աշխատավայրում, առողջապահական հիմնարկում, կենցաղային վայրերում,

հիմնովին փոխվել է հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ թե՛ պետության, թե՛ հասարակության վերաբերմունքը:

Շրջակա միջավայրի մատչելիության խնդիրների վերաբերյալ հարցվածների մեծ մասը, որպես ամենակարևոր խոչընդոտ, մատնանշել է բոլոր ոլորտներում անմատչելի միջավայրը և թեքահարթակների բացակայությունը:

-“**Ձեր կարծիքով մատչելիության հետ կապված ի՞նչ խնդիրների են առնչվում հաշմանդամություն ունեցող անձինք մեր երկրում /քաղաքում: Խնդրում ենք նշել ամենակարևոր խոչընդոտները**” հարցին 29 հարցվածներից 1-ը չի պատասխանել հարցին, 2-ը նշել են, որ այդ ուղղությամբ վերջին շրջանում աշխատանքներ տարվել են, 26-ը մատնանշել են անմատչելիության գործոնը թե՛ հասարակական տրանսպորտում, թե՛ շենք-շինություններում, ընդգծել են թեքահարթակների բացակայությունը կամ ստանդարտներին ոչ համապատասխան լինելը: Կարևորվել է նաև շենքի ներսում տեղաշարժվելու խնդիրը. եթե անգամ ՀՈւԱ-ը թեքահարթակով մուտք է գործում շենք, խնդիր է առաջանում շենքի ներսում տեղաշարժվելը:

Կրթության մատչելիության վերաբերյալ 29 հարցվածներից 4-ը չի պատասխանել հարցին, 3-ը ոլորտում սահմանափակումներ չի տեսնում, բայց ոչ բոլորն են օգտվում, 1-ը այն գնահատել է միջինից ցածր, 9-ը կարևորել են ներառական կրթության համակարգի ներդրումը, 5-ը նույնպես կարևորել են ներառական կրթությունը, բայց առանձնացրել նման դպրոցներում մատչելի պայմանների՝ մասնավորապես, հարմարեցված սանհանգույցի, համապատասխան մասնագիտական թիմի բացակայությունը: Նրանցից մեկն օրինակ, կրթության ոլորտում մատնանշել է մարզերում առկա թերությունները՝ կարիքների գնահատման արդյունավետության առումով, դպրոցների անմատչելի լինելը հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար և այլն: Հարցվածներից 3-ը, որպես կրթության ոլորտի խոչընդոտ, առաձնացրել է ուսումնական հաստատությունների անմատչելիությունն ընդհանրապես, 1-ը՝ տնային պայմաններում որակյալ կրթություն ստանալու հնարավորության բացակայությունը և ընդամենը 1 հարցվող է մեծ առաջընթաց նկատել կրթության ոլորտում ՀՈւԱ-ների համար: Կրթության ոլորտում նույնպես մեծ առաջընթաց կա, հաշմանդամություն ունեցող անձանց հետ կապված, նախկինում դպրոցահասակ կամ ուսանողի տարիքի հաշմանդամություն ունեցող անձը տանն էր, այժմ նրանք հավասար իրավունքներով ուսանում են նշված հաստատություններում: Հարցվածներից 1-ը խնդիրը կապում է ոլորտի պատասխանատու համարվող մարզպետարանների և առողջապահության ու սոցիալական հարցերի նախարարությունների հետ, մեկ այլ հարցվող ոլորտի խնդիր է համարում ՀՈւԱ-ների՝ դպրոց չգնալը և ավարտական վկայական չունենալը:

Առողջապահական ծառայությունների մատչելիության մասով 29 հարցվածներից 9-ը չեն պատասխանել հարցին, 9-ը ոլորտում խնդիր են համարել առողջապահական հաստատություններ ՀՈւԱ-ների մուտքի սահմանափակումները, 2-ը նշել են, որ մատչելի են, այլ հարց է՝ ով որքանով է օգտվում, 1-ը լավատեղյակ չէ, 1-ը ոլորտում առկա խնդիրները կապել է մարզպետարանների և առողջապահության ու սոցիալական հարցերի նախարարությունների աշխատանքների հետ: 1-ը որպես խնդիր մատնանշում է հատկապես վերականգնողական ծառայությունների անմատչելիությունը՝ հատկապես մարզերի ՀՈւԱ-ների համար, ովքեր ստիպված են մայրաքաղաք հասնել, իսկ ահա 1 հարցված ոլորտում առաջընթաց է տեսնում, հատկապես՝ անվճար բուժումը, տարբեր պարագաների տրամադրումը /պրոթեզներ, հենասայլակներ, հանգստյան տներում հանգստի կազմակերպում և

այլն/ 4-ը նշել են, որ թեև ՀՈւԱ-ները անվճար օգտվում են բուժսպասարկումից, բայց դա անբավարար է: Հարցվածներից 1-ը ոլորտում խնդիր է համարում հատկապես այն, որ հաշմանդամություն ունեցող կանայք ավելի խոցելի են, քանի որ վերջիններս, կարծես թե, անտեսված են վերարտադրողական առողջության, անվտանգ մայրության, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, ծնողավարություն և այլ թեմաներով համապատասխան տեղեկություն և բժշկական օգնություն ստանալու տեսանկյունից, որովհետև առողջապահության ոլորտի աշխատողների մեծ մասը չի ընդունում, որ հաշմանդամություն ունեցող կինը ևս իրավունք ունի, և կարող է սեռական կյանքով ապրել, ունենալ իր ընտանիքը, երեխա ծնել, սակայն բոլոր այս հարցերում բխվում է մատչելիության խնդրին: Թեև օրենքով սահմանված է , որ հաշմանդամության 1-ին և 2-րդ խումբ ունեցող անձը կարող անվճար օգտվել բժշկական ծառայություններից, ակնհայտ է, որ ավելորդ քաշքշուկներից, բուժաշխատողների տհաճ վերաբերմունքից ազատվելու համար, վերջիններս հնարավորության դեպքում գերադասում են վճարել, քան անվերջ սպասել:

- **Մշակութային մատչելիության վերաբերյալ** 29 հարցվածներից 6-ը չեն պատասխանել, 16-ը խնդիրը կապում են մշակութային օջախների անմատչելիության հետ, 1-ը նշել է, որ ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով ՀՈւԱ-ները չեն մասնակցում մշակութային միջոցառումների: 1 հարցված միջինից ցածր է գնահատում իրավիճակը, 1-ն առաջարկում է բացահայտել ՀՈւԱ-ների կարողությունները, խրախուսել նրանց, 1 այլ հարցված նշել է, որ մշակութային մատչելիության հնարավորություն կա, այլ հարց է՝ որքանով են ՀՈւԱ -ները օգտվում մշակութային օջախներից: 1-ը նշել է, որ մշակույթի օջախները հիմնականում համապատասխանում են մատչելի միջավայրի չափանիշներին: 1-ի կարծիքով՝ ՀՈւԱ-ները, հատկապես երեխաները ազատ մասնակցում են մշակութային միջոցառումների, հաճախում տարբեր խմբակներ: 1-ը նշել է, որ կառուցվել են թեքահարթակներ 5 մշակութային օջախների մուտքերի մոտ:

Սոցիալական ոլորտի մատչելիության վերաբերյալ 29 հարցվածներից 7-ը չեն պատասխանել հարցին, 1-ը նշել է, որ ոլորտը մատչելի է, այլ հարց է՝ օգտվում են արդյոք ՀՈւԱ-ները ոլորտի ծառայություններից, թե՞ ոչ: 11-ը նշել են, որ սոցիալական ծառայություններ մատուցող հաստատությունների շենքերը մատչելի չեն ՀՈւԱ-ներին: 1-ը նշել է վերականգնողական անհատական ծրագրերի բացակայությունը և ձևական բնույթը: 1-ը միջինից ցածր է համարում ոլորտում առկա իրավիճակը: Հարցվածներից 1-ը պետական բյուջեի աճի հետ է կապում սոցիալական ոլորտի խնդիրների լուծումը: 3-ը ոլորտում խնդիր են համարում ՀՈւԱ-ների թոշակների նվազ լինելը, աշխատատեղերի բացակայությունը: 1-ը՝ դրանք կապում է կոռուպցիայի առկայության հետ, 1 այլ հարցված ոլորտում առկա խնդրի լուծում է տեսնում ՀՈւԱ-ների համար սոցիալական նպաստի որոշակի չափ սահմանելը: 2-ը կարևորել են համապատասխան վերականգնողական պարագաների տրամադրումը

“Ձեր կարծիքով զբաղվածության ոլորտում ինչպիսի՞ խնդիրների հետ են առնչվում հաշմանդամություն ունեցող անձինք” հարցին՝ 29 հարցվածներից 3-ը չեն պատասխանել, 25-ը ոլորտում առկա խնդիր են տեսնում աշխատատեղերի բացակայությունը, հատկապես՝ հարմարեցված աշխատատեղի, նաև մասնագիտական դասընթացների բացակայությունը, գործատուների անվստահությունը: 1-ն առաջարկել է ՀՈւԱ-ներին աշխատանք առաջարկող գործատուներին շատ ավելի շոշափելի նյութական աջակցություն ցուցաբերել՝ թեկուզ, հարկային բեռի թեթևացման տեսքով:

Գերատեսչությունը, կառույցը, որը ներկայացնում էք՝ ի՞նչ քաղաքականություն է իրականացնում նշված ոլորտում” հարցին, 29 անձանցից 2-ը չեն պատասխանել, 10-ը մատնանշել են սոցիալական ներառման ծրագրեր, ՀՈԱ-ներին իրենց իրավունքների մասին իրազեկում, մասնագիտական դասընթացներ: 5 հարցվածներ նշել են, որ իրենց գերատեսչությունը փորձում է հնարավորինս աջակցել ՀՈԱ-ներին/ նաև նյութական աջակցության տեսքով/, 5-ը նշել են ՀՈԱ-ների հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի ստեղծումը, պետական քաղաքականության իրականացումը, ներառական կրթությունը և շահերի պաշտպանությունը, մարզպետարանի համապատասխան բաժինների աշխատանքը, որը սակայն, բավարար չէ և հարկավոր է համալիր մոտեցում: 3 հարցված նշել են ծրագրեր, որոնք նպատակաուղղված են ՀՈԱ-ներին աշխատանքով ապահովելուն, 4-ը՝ պետական ծրագրեր՝ ուղղված աշխատատեղերի բացմանը և մատչելի միջավայրի ապահովմանը բոլոր ոլորտներում:

“Նշեք ներկայումս իրականացվող պետական ամենակարևոր ծրագիրը կամ նախագիծը” հարցին 29 հարցվածներից 3-ը տեղյակ չեն եղել, 2-ը չի պատասխանել, 6-ը պատասխանել է ներառական կրթության ներդրումը, 5-ը՝ ՀՈԱ-ների սոցիալական ներառումը և զբաղվածության խնդրի լուծումը, 11-ը՝ աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագիրը, 2-ը՝ թեքահարթակների կառուցումը:

”Համագործակցում էք արդյոք ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների հետ և համատեղ ինչպիսի՞ ծրագրեր եք իրականացրել կամ իրականացնում” հարցին 29 հարցվածներից 3-ը չեն պատասխանել, 17-ը համագործակցում են ոլորտի հկ-ների հետ և հետագա համագործակցության պատրաստակամություն են հայտնել: 1-ը նշել է, որ համագործակցություն չկա: 8-ը պատասխանել են, որ հկ-ների հետ համագործակցության արդյունքում համատեղ իրականացրել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և սայլակների տրամադրում, թեքահարթակների կառուցում, ներառական կրթության մոդելի ներդրում, զբաղվածության, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ կոնվենցիայի իրազեկում, շահերի և ընտրական իրավունքի պաշտպանություն: Հարցի հետ կապված՝ Լոռու մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցն, օրինակ, առաջարկել է համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով իրականացվող պետական կարևոր ծրագրերը կամ նախագծերը՝ մասնավորապես, թեքահարթակների կառուցումը, վստահել ոլորտի հասարակական կառույցներին:

Եզրակացություն

- Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ վերջին տարիներին Հայաստանում որոշակի ոլորտներում դրական տեղաշարժեր են նկատվում հաշմանդամություն ունեցող անձանց իրավական պաշտպանության առումով, թեև բազմաթիվ չլուծված խնդիրներ կան՝ հասարակության անհանդուրժողականությունից մինչև պետական քաղաքականության թերի ընթացակարգեր: Անկասկած, վերոնշյալ խնդիրների լուծմամբ հաշմանդամություն ունեցող անձանց կյանքը Հայաստանում էապես կփոխվի:
- ՀՀ-ը, 2010թ. վավերացնելով ՄԱԿ-կոնվենցիան «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին», որդեգրեց մի շարք պարտավորություններ՝ հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ներառելուն ուղղված քաղաքականություն, օրենսդրության համապատասխանեցում կոնվենցիային դրույթներին,

օրենսդրությամբ սոցիալական ներառման սկզբունքների սահմանում և պաշտպանություն, հիմնահարցերի լուծման նոր մոտեցումների որդեգրում, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծում՝ սոցիալական մոդելի կիրառմամբ/:

- Թեև նշված փաստաթղթի՝ գործողության մեջ մտնելուց անցել է գրեթե 2 տարի, վերոնշյալ հարցման մասնակիցները, սակայն, առանձնացնում են աշխատանք չունենալու, տրանսպորտից չօգտվելու, մատչելի միջավայրի և ծառայությունների մատչելիության բացակայության խնդիրները: Հետազոտության արդյունքներից կարելի է հետևություն անել, որ ոչ միայն պետական քաղաքականության և թերի ընթացակարգերի խնդիր կա, այլև որոշ դեպքերում պատկան գերատեսչությունների և կազմակերպությունների պաշտոնատար անձանց համարժեք մոտեցման և արհեստավարժության: Լոռու, Շիրակի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում ակնհայտորեն առկա է սոցիալական գործընկերության սկզբունքների կիրառման և կամ խորացման անհրաժեշտություն: Այդուհանդերձ, առկա բարեփոխումները՝ մասնավորապես, ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրումը և այլ նախաձեռնություններ, ինչպես նաև կառավարության որդեգրած սկզբունքները, հույս են ներշնչում, որ բոլոր կառույցների միջև գործընկերության սերտացման պարագայում հնարավոր է սպասել շոշափելի արդյունքների:

Քանակական հարցումների հետազոտություն/բացահայտումներ և արդյունքներ

«Ամեն ինչ մեզ համար, մեզ հետ» ծրագրի շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հարցումն ուղղված էր հաշմանդամություն ունեցող մարդկանց շրջանում սոցիալական և քաղաքացիական հիմնախնդիրների բացահայտմանը, որոնք մինչ օրս անհայտ են խնդրով զբաղվող կառույցներին:

Հարցման շրջանակն ընդգրկել է Լոռի, Շիրակ, Գեղարքունիք և Արագածոտն մարզերի 19 քաղաքներ՝ Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի, Սպիտակ, Ախթալա, Շամլուղ, Թումանյան, Գյումրի, Մարալիկ, Արթիկ, Աշտարակ, Ապարան, Թալին, Գավառ, Մարտունի, Սևան, Վարդենիս և Ճամբարակ:

Հարցումն իրականացվել է 2012թ. գարնանը:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած ցուցակներից դասակարգվել են հաշմանդամության առաջին, երկրորդ և երրորդ խումբ ունեցող մարդկանց, ինչպես նաև միջև 18 տարեկանների անունները, ցուցակներն անցկացվել են հատուկ համակարգչային ծրագրով, որի արդյունքում պատահական ընտրանքի սկզբունքով, հարցման համար ընտրվել է 10- ական անձ՝ յուրաքանչյուր խմբից: Համապատասխանաբար 40 անձ յուրաքանչյուր քաղաքից, սակայն հետագա աշխատանքի ընթացքում /հարցումներ կատարելիս/ ցուցակներում հայտնաբերվել են շուրջ 30 տոկոս անճշտություններ. կային այնպիսի հասցեներ, որտեղ տվյալ անձն այժմ չի բնակվում, կային նաև մահացած քաղաքացիների տվյալներ և այլն: Արդյունքում՝ ըստ մարզերի համամասնությունն ստացվեց անհամաչափ: Այսպիսով՝ հարցման մասնակիցների 39 %-ն ընդգրկել է Լոռու, 32%-ը Գեղարքունիքի, 12%-ը Արագածոտնի և 17%-ը Շիրակի մարզերը: Թեև հաշմանդամություն ունեցողները, թվի առումով Շիրակի մարզում ավելի շատ են, հարցման մասնակիցներից միայն 17 %-ն են եղել Շիրակից: Ընդհանուր առմամբ՝ հարցման են ենթարկվել հաշմանդամություն ունեցող 526 անձիք: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կիրառվել է համապատասխան մեթոդաբանություն, ըստ որի, որոշակի հարցերի դեպքում ամփոփումը կատարվել է ելնելով ընդհանուր հարցվածների թվից, իսկ մյուս դեպքերում՝ ըստ տվյալ մարզի

հարցվածների թվից, կամ ըստ հաշմանդամության խմբի՝ հաշվի առնելով հարցի նշանակությունը: Հաշվի են առնվել տարիքային, սեռային պատկանելության, և այլ ցուցանիշներ:


Մշակված անանուն հարցաթերթը ներառում էր բազմաթիվ հարցեր՝ կրթության, առողջապահության, սոցիալական վիճակի, մարդու իրավունքների, պետության պարտավորությունների և շատ այլ ոլորտների մասին:

Հարցվածների 21%-ը առաջին, 30%-ը՝ երկրորդ, 31 %-ը՝ երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող մարդիկ էին, 18%-ը՝ հաշմանդամություն ունեցող երեխաներ: 18 տարին լրացած, կրթություն ստացած հարցվածները կազմում էին 90 %, նրանցից 46 %-ը՝ միջնակարգ, 25 %-ը՝ թերի բարձրագույն և կամ միջին մասնագիտական, 18%-ը՝ բարձրագույն, 9%-ը՝ թերի միջնակարգ կրթությամբ, և միայն 2 %-ն է, որ կամ ինքնակրթությամբ է զբաղվել, կամ հաճախել է մի քանի դասարան:

Ինչ վերաբերվում է հարցվածների մասնագիտությանը և աշխատանքին՝ նրանց 55 %-ն ունի մասնագիտություն, իսկ ընդհանուր հարցվածների 79 %-ը աշխատանք փնտրողներ են: Շիրակի մարզում մասնագիտություն ունեն հարցվածների 70%-ը, մեծ է նաև աշխատանք փնտրողների թիվը՝ շուրջ 85 %:


Գրեթե նույն պատկերն է մյուս մարզերում, Լոռիում, օրինակ՝ հարցվածների 66 %-ն ունի մասնագիտություն, 78 %-ը՝ աշխատանք փնտրողներ են: Այստեղ հարկ է նշել, որ հարցվածների մեծ մասը, ովքեր չունեն աշխատանք, ունեն աշխատելու մեծ ցանկություն, շատ դեպքերում նրանք նշանակություն չեն տալիս աշխատավայրին, միայն թե աշխատատեղ ունենան: Ըստ մարզերի կարելի է նկատել, որ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը չի գերազանցում 27 %-ը (պատկեր 1), այս ցուցանիշն, իհարկե, պայմանավորված է նրանով, որ հարցվածների զգալի մասը ունեն 3-րդ խմբի հաշմանդամություն:

պատկեր 1



Բժշկասոցիալական փորձաքննության մասով ուղղված հարցերից առանձնացվել է հետևյալը՝ «Արդյոք հաշմանդամության խումբ ստանալուց ունեցել եք խնդիրներ» հարցին 88%-ը պատասխանել է, որ չի ունեցել խնդիրներ, 12%-ը խնդիրներ են ունեցել (պատկեր 2), հատկապես՝ երրորդ խումբ ձեռք բերելողները: Ընդհանուր առմամբ՝ նրանց 47 %-ը նշել է, որ իրենցից գումար են ուզել հաշմանդամության խումբ նշանակելու համար, մյուս 35%-ը նշել է, որ իրենց ցուցաբերել են դժկամ, անմարդկային վերաբերմունք:

պատկեր 2




Ընդհանուրի 49 %-ը կարծիք է հայտնել, որ ԲՄՓՀ –ի քննությունն իրենց համար անհրաժեշտ և կարևոր է, որը վերականգնողական անհատական ծրագրի հիման վրա ապահովում է հավասար հնարավորությունների ստեղծում, 25%-ը կարծիք է հայտնել, որ այն ուղղակի անիմաստ քաջքշուք է, 24%-ը՝ թոշակ ստանալու թույլտվություն: Պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ օգտագործողներին, անդրադառնալով հարկ է նշել, որ նրանց մեծ մասը՝ 59 %-ը, այն ձեռք են բերում պետական կառույցներից, 16 %-ը՝ ՀԿ-ներից, 18 %-ը՝ գնում են: Մա այն պարագայում, երբ պետությունը պարտավոր է ապահովել անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ:

Ինչ վերաբերում է հաշմանդամություն ունեցող անձանց ուղղված պետական քաղաքականության ծրագրերին, իրավունքներին և արտոնություններին տեղեկացվածությանը, հարցվածների 48 %-ը բոլորովին ծանոթ չէ, մասամբ ծանոթ է 39 %-ը և միայն 11 %-ն է ծանոթ եղել պետական քաղաքականության ծրագրերին:

Հարցվածների միայն 19 %-ն է, որ հանդիպել է իրավախախտումների, իրավունքների ոտնահարման և անհարգալից վերաբերմունքի վերջին 5 տարում պետական և /կամ տեղական մարմիններում/, 38 %-ի մոտ իրավունքի ոտնահարումներ և անհարգալից վերաբերմունք հիմնականում նկատվել են առողջապահական հիմնարկներում (պատկեր 3)՝ ներառյալ հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ: 31 %-ը իրավունքների ոտնահարում են նկատել սոցիալական ծառայություններում:

պատկեր 3



Խախտված իրավունքները պաշտպանելու կամ որևէ խնդիր ունենալու դեպքում հարցվածների 37 %-ը որևէ մեկին դիմել չի ցանկացել, 15 %-ը նշել է, որ կդիմեր համայնքապետին, 13%-ը Մարդու Իրավունքների Պաշտպանին, 9 %-ը՝ ՀԿ-ներին, 4-5 %-ը՝ ՀՀ նախագահին, ԱԺ-ին, մարզպետարանին, 2 ական % -ն է՝ էլ իրավապահ մարմիններին և կառավարությանը:

Հարցվածների միայն 5% -ն են գտնում, որ պետությունը լիովին կատարում է հաշմանդամություն ունեցող քաղաքացիների հանդեպ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ստանձնած պարտավորությունները, 32%-ը կարծում է, որ մասամբ է կատարում, 21%-ի կարծիքով՝ բոլորովին չի կատարում, 20%-ը՝ դեռևս ոչ:

Հարցվածների 75 %-ը կարծում է, որ **հաշմանդամություն ունեցող անձինք ունեն նույն իրավունքները, ինչ մյուս քաղաքացիները, 12%-ը կցանկանար իմանալ իր իրավունքների մասին:**

526 հարցվածների 57 %-ը կարծում է, որ լիարժեք կյանքով ապրելու համար հարկավոր է թոշակների ավելացում, 6%-ը՝ հավասար հնարավորությունների ստեղծում, 5%-ը՝ հասարակության դրական վերաբերմունք, 2%-ը՝ մատչելի միջավայր, 12 %-ը՝ հարցին չի պատասխանել, մնացած 18 %-ը՝ տվել են այլ պատասխաններ:

“Նախորդ ընտրություններին մասնակցել են թե ոչ “ հարցին պատասխանել են 436 հարցվող: Նրանց 82%-ը նշել են, որ ակտիվորեն մասնակցել է ընտրական գործընթացներին: Հարցը չի արտացոլում 2012–ին կայացած ԱԺ ընտրությունները, քանի որ հարցումն ավելի վաղ է կատարվել:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գործընթացում հիմնական խնդիրները և խոչընդոտները

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գործընթացում հիմնական խնդիր և խոչընդոտ են կենսագործունեության միջավայրի մատչելիության բացակայությունը և զբաղվածության ապահովման երաշխիքները /օր. գործատուների մոտ քվոտաների համակարգ/ և գործող ծրագրերի ոչ բավարար լինելը:

Կենսագործունեության միջավայրի մատչելիության ապահովում նշանակում է ՀՈւԱ-ների կենսագործունեության սահմանափակումները հաղթահարելու նպատակով և նրանց կարիքները հաշվի առնելով՝ բնակելի և հասարակական շենքերի, փողոցների, բժշկական, արտադրական, ուսումնական, մշակութային, մարզական և այլ շինությունների նախագծումը, կառուցումը և վերակառուցումը, ինչպես նաև հասարակական տրանսպորտային միջոցների հարմարեցումը, տեղեկության ու հաղորդակցության միջոցների մատչելիությունը տեսողական ու լսողական խնդիրներ ունեցողների համար:

Գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ապահովեն ՀՈւԱ-ների համար կրթական, մշակութային և մարզական կառույցների մատչելիությունը և դրանցից օգտվելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, հատուկ մարզական գույքի տրամադրումը:

Փորձը ցույց է տալիս, որ շինությունները սակավաշարժուն անձանց համար կարող են մատչելի լինել չնչին գումարներ ներդնելով, կամ ընդհանրապես ոչինչ չարժենան, եթե խնդիրը հաշվի առնվի կառույցի նախապատրաստական-նախագծման փուլերում:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի քաղաքային տարածքներին, որտեղ իրականացվում է լայնածավալ շինարարական գործունեություն:

Քաղաքաշինության գործունեության ոլորտը կարգավորող «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը և դրանից բխող իրավական այլ ակտերը մինչև 2002 թվականը ընդհանուր բնույթ էին կրում և, որպես կանոն, հիմնվում են այլ օրենքների, օրենսդրական ակտերի և նորմատիվ-տեխնիկական ակտերի պահանջների կատարման վրա՝ առանց մանրամասների և պարզաբանումների:

Քաղաքաշինության գործունեության հետ առնչվող ՀՈւԱ-ների սոցիալական պաշտպանության իրավունքի իրականացման ժամանակ ծագող հարաբերությունները ամբողջական կարգավորվեցին օրենքներով և իրավական այլ ակտերով՝ սկսած միայն 2004 թվականից:

Ձևավորվող քաղաքաշինական միջավայրը պետք է արտահայտի հասարակության սոցիալական բոլոր շերտերի հավասարության և արդարության սկզբունքը:

Քաղաքներում ՀՈւԱ-ների և բնակչության այլ սակավաշարժուն խմբերի համար անարգել կենսագործունեության միջավայրի ստեղծման խնդրի արդիականությունը պայմանավորված է քաղաքների բնակչության թվի մեջ նրանց թվի շոշափելի աճով, ինչպես նաև քաղաքային միջավայրի անհամապատասխանությամբ՝ ՀՈւԱ-ների ֆիզիկական հնարավորությունների նկատմամբ: Բնակչության տարբեր խմբերի հետազոտությունը ցույց է տալիս, որ շատ երկրներում ամեն 10 մարդուց մեկն ունի ֆիզիկական, մտավոր և այլ խնդիրներ:

Բնակավայրերի բնակելի գոտիները և ճանապարհային ցանցը պետք է նախագծվի ՀՈւԱ-ների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար հետիոտն երթուղով և հասարակական տրանսպորտի կանգառներում ու հարթակներում՝ նրանց համար մատչելի մատույցներով:

Վերլուծելով շենքերի, շինությունների և փոխադրական -հաղորդակցման նախագծման համակարգի նորմատիվամեթոդական փաստաթղթերի կիրարկման ժամանակակից վիճակը՝ ելնելով հաշմանդամություն ունեցող անձանց պահանջմունքներից, հարկ է նշել, որ դրանք գրեթե չեն համապատասխանում ՀՈւԱ-ների համար՝ չապահովելով հարմարավետ կենսագործունեության միջավայր:

Չնայած ՀՈւԱ-ների սոցիալական պաշտպանության բնագավառում այսօր հանրապետությունում գործող համեմատաբար զարգացած իրավական բազայի առկայությանը, պետությունը դեռևս չի կարողանում լուծել և կարգավորել նրանցից շատերի խնդիրները:

Հաշմանդամություն ունեցող անձինք իրենց պահանջմունքներին համապատասխան սոցիալական աջակցություն և սոցիալ-իրավական բավարար օգնություն չեն ստանում: Գլխավոր բացթողումն այն է, որ ֆինանսական միջոցների անբավարարության, հաճախ նաև՝ պատասխանատու անձանց կողմից օրենսդրությամբ սահմանված դրույթները չապահովելու պատճառով դրանք ամբողջությամբ չեն կիրառվում, որի հետևանքով չի ապահովվում ՀՈւԱ-ների լիարժեք և բազմակողմանի ներառումը ընտանիք և հասարակություն:

Որպես պարտադիր պայման և պահանջ օրենսդրության կիրառման համար անհրաժեշտ է ֆինանսական բավարար ապահովում և երաշխիքներ: Վերջինիս բացակայության, ինչպես նաև ընթացակարգերի անկատարության պատճառով վերջին տարիներին ընդունված շատ օրենսդրական ակտեր չեն կիրառվում, կամ կիրառվում են մասամբ:

Պետական իշխանության և կառավարման մարմինները, ՀՀ տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է ապահովեն սոցիալական ենթակառուցվածքներով օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը :

Չի թույլատրվում բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձևավորումը, նախագծային լուծումների մշակումը, շենքերի, կառուցվածքների, ներառյալ օդանավակայանների և երկաթուղային կայանների շինարարությունն ու վերակառուցումը, ինչպես նաև տրանսպորտային միջոցների, այդ թվում՝ անհատական, կապի և տեղեկատվության միջոցների մշակումն ու արտադրությունը, եթե դրանք հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության և օգտագործման համար հարամարեցված չեն: Չկա կամ չի գործում մի տեսչական մարմին, որը հսկողություն կսահմանի և տույժերի կենթարկի խախտումներ թույլ տվողներին:

Սակավաշարժուն խմբերի հարմարավետ տեղաշարժի (տեղափոխման) ապահովման խնդիրն ամենագլխավորն ու կարևորն է քաղաքաշինության ոլորտում:

Առանձին օբյեկտների կամ քաղաքի ֆունկցիոնալ տարածքների վերակառուցման և նոր շինարարության պայմաններում հարկավոր է հաշվի առնել հաշմանդամություն ունեցող անձանց՝ տարբեր նպատակներով տեղաշարժը (աշխատանքային, մշակութային, կենցաղային) բնակարանից դուրս, ուր նրանք հաճախակի վտանգի են ենթարկվում:

Հաշմանդամություն ունեցող անձանց հարմարավետ տեղաշարժն ապահովելու նպատակով (քաղաքային և մայրուղային տրանսպորտի օգտագործման պայմաններում) բնակելի գոյացումների և քաղաքների ընդհանուր տարածքում անհրաժեշտ է նախատեսել հետիոտն-ճանապարհային տեղաշարժման ողջ պրոցեսի հատակագծային և տեխնիկական կազմակերպում:

Շատ միջավայրային առանձնահատկություններ, որոնք հատկապես կարևոր են տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց համար, իրականում այդքան էլ մանրակրկիտ մտածված չեն: Շատերը ներառում են քիչ ծախսատար են, եթե նախատեսվեն և իրականացվեն սկզբից:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկ- ձեռնարկությունների և կազմակերպությունների հիմնական խնդիրը պետք է դառնա օրենքներով, իրավական այլ ակտերով, քաղաքաշինական փաստաթղթերով սահմանված պահանջների իրականացումն ու դրա ապահովման ուղղությամբ վարչարարության ուժեղացումը:

Փողոցային հետոտն շարժման կազմակերպման ժամանակակից պայմաններում հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցներն ավելի շատ են ենթարկվում ճանապարհային վթարների, քան մյուս քաղաքացիները,:

Վիճակագրությունը հաստատում է, որ ԱՄՆ-ում հետիոտնի հետ կապված ճանապարհային վթարների 25 %-ը կապված է տարեցների հետ: Եթե հաշվի առնենք, որ բնակչության այդ խմբի տեսակարար կշիռը կազմում է շուրջ 10 %, ապա հաշմանդամություն ունեցող անձանց ենթարկվելը ճանապարհային վթարների 2,5 անգամ ավելի է, քան երկրի բնակչության մյուս հատվածինը:

Քաղաքների վերակառուցման ժամանակ պետք է ստեղծել տրանսպորտային շարժումից ազատ հետիոտնային գոտիներ (փողոցներ, հրապարակներ): Հետիոտն գոտու ստորգետնյա հատակագծային լուծման ժամանակ պետք է նախատեսվեն ամբարձիչներ, վերելակներ, շարժասանդուղքներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց բարձրացման և իջեցման համար:

Հասարակական տրանսպորտի կայանների կողքին անհրաժեշտ է նախատեսել ծածկած հարթակներ հաշմանդամություն ունեցող անձանց համար, պետք է տեղակայված լինեն նաև թիկնակով նստարաններ և ազատ տարածություն՝ սայլակների համար :

Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից օգտագործվող հետիոտն ուղիների և շենք-շինությունների վերնածածկույթը պետք է լինի կոշտ, ամուր՝ բացառելով սայթաքումները:

Տրանսպորտի, կապի և տեղեկատվության միջոցները և սոցիալական ենթակառուցվածքների մյուս օբյեկտները պետք է հարմարեցվեն հաշմանդամություն ունեցող անձանց պահանջմունքների բավարարմանը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով, պայմաններով և ժամկետներում:

Քաղաքի քաղաքաշինական և սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում այս մասով պետք է նախատեսվեն.

ա) երկաթուղային, ավտոբուսային հանգուցային կայարանների և օդանավակայանների վերասարքավորման և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի դարձնելու ժամկետները.

բ) հաշմանդամություն ունեցող անձանց փոխադրող (այդ թվում՝ հաշմանդամային սայլակներով) տրանսպորտային միջոցների հատուկ հարմարանքներ.

գ) երթևեկության նախապես սահմանված գրաֆիկներով հատուկ երթուղիներ.

դ) տրանսպորտային միջոցների կանգառներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց պահանջով :

Այն, ինչ պետք է նախատեսվի, Երևանի քաղաքապետառանի հավաստմամբ արդեն իսկ նախատեսվում է քաղաքապետարանի ծրագրերում, սակայն այսօր մեր տրանսպորտային միջոցների հարմարեցումը, մեղմ ասած, բավարար չէ:

2012 -ին Երևան ներմուծված ավտոբուսներից 25-ը հարմարեցվելու են հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այս մոտեցումը, որ որդեգրել է քաղաքապետարանը, մեծ հույսեր է ներշնչում: Շատ կարևոր է, որ այդ աշխատանքները կատարվեն հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և հենց հաշմանդամություն ունեցող անձանց անմիջական մասնակցությամբ:

Երթուղիների շահագործման մրցույթներ հայտարարելիս պետք է դրվի պարտադիր պահանջ՝ յուրաքանչյուր երթուղում ունենալ առնվազն 2 տրանսպորտային միջոց՝ հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց:

Թվարկված պահանջները, դրանք կյանքի կոչելու միջոցառումները պետք է իրականացվեն այդ խնդիրների համար պատասխանատու մարմինների կողմից, վերահսկվեն հանրության, այդ թվում ոլորտի հասարակական կազմակերպությունների կողմից:

Օրենքներում պետք է գերիշխեն այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են հավասար հնարավորությունների ապահովումը, սոցիալական արդարության պահպանումը, օգնության հասցեականությունը և այլն:

Պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր երկրի օրենսդրության հիմքում ընկած են միայն տվյալ երկրին բնորոշ հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, կրոնական, մշակութային և ազգային գործոններ:

Քաղաքաշինության ոլորտում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման առաջարկությունները պետք է վերաբերվեն նոր նախատեսվող օբյեկտների նախագծմանն ու շինարարությանը, ինչպես նաև վերակառուցման ենթակա օբյեկտներին, որպեսզի հնարավոր լինի այս մասով լրացուցիչ ֆինանսավորման խնդիրները նախատեսել և ընդգրկվել օրենքով սահմանված համապատասխան բյուջեներում:

4. Նոր մտտեցումներ և նախատեսվող բարեփոխումներ

Համապատասխան օրենսդրական բարեփոխումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ներառմանը, նրանց համար հավասար պայմանների ապահովմանը, մատչելի միջավայրի, տրանսպորտային միջոցների, շենքերի և շինությունների, ինչպես նաև տեղեկության մատչելիության ապահովմանը, նախատեսված են «Կայուն զարգացման ծրագրով» և այլ փաստաթղթերով:

Արդեն իսկ մշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը քննարկվել է ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծով հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակություն ներառելուն ուղղված քաղաքականությունը և օրենսդրությունը համապատասխանեցվում է 2006թ. դեկտեմբերի 13-ին ՄԱԿ-ի կողմից ընդունված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) դրույթներին, որոնցով մասնակից պետությունները պարտավորություն են ստանձնել իրենց օրենսդրությամբ սահմանել և պաշտպանել սոցիալական ներառման սկզբունքները, հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակություն ներառելուն ուղղված

քայլերի կատարում կամ նրանց ակտիվացում, հիմնահարցերի լուծման նորովի մոտեցումների որդեգրում: Կոնվենցիան ՀՀ կողմից ստորագրվել է 2007 թ. մարտի 30-ին, վավերացվել է 2010 թվականի մայիսի 17-ին և Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ է մտել 2010թ. հոկտեմբերի 22-ին:

Օրենքի նախագծով սահմանված են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման (հավասար պայմանների ապահովման, բոլոր իրավունքներից իրավահավասար օգտվելու, բոլորի հետ հավասար ակտիվ կյանք վարելու, սովորելու, աշխատելու հնարավորության) սկզբունքները, սոցիալական ներառման համակարգի և դրա կառավարման վերաբերյալ դրույթները: Հստակեցված են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համակարգի կառավարման և նրանց իրավունքների ու սոցիալական ներառման պայմանների ապահովման գործընթացում միջոցառումների պլանավորման, ղեկավարման, կազմակերպման, պատասխանատվության ու լիազորությունների բաշխման և վերահսկման գործառույթները՝ համապատասխան պետական լիազոր մարմինների կողմից:

Նախագծում առանձնացված են ներառական կրթության և զբաղվածության խթանմանն ուղղված դրույթներ: Ներկայումս քննարկվում են դրույթներ, որոնց սահմանումը կնպաստի մասնագիտական և ընդհանուր կարողությունները կորցրած, տնտեսապես պասիվ և հավասար պայմաններում աշխատանքային շուկայում անմրցունակ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովմանը և հետևաբար՝ սոցիալական ներառմանը:

Օրենսդրական փոփոխությունների շարքն իր մեջ ներառում է նաև անձին որպես հաշմանդամություն ունեցողի ճանաչելու նոր մոտեցումների սահմանումը: Օրենքի նախագծով նախատեսված են նոր մոտեցումներ հաշմանդամության սահմանման գործընթացում: Անձի կենսագործունեության տեսակներից, որոնց սահմանափակման աստիճանը որոշվում է բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ, առանձնացվում և ավելի կարևորվում է աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողությունը, որը սահմանվելու է տոկոսներով և համապատասխան սոցիալական չափորոշիչների հետ համադրման արդյունքում՝ հիմք հանդիսանալու հաշմանդամության կենսաթոշակների հաշվարկման ու առանձին արտոնությունների տրամադրման համար:

Օրենքի նախագծով սահմանված է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով ազգային հանձնաժողովի՝ որպես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության գործընթացին աջակցող և այն վերահսկող մարմնի, գործառույթները և լիազորությունները:

Որպես օրենքի պահանջ նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գործընթացի ծրագրային ապահովումը՝ ռազմավարական երկարաժամկետ և տարեկան ծրագրերի մշակումը:

Օրենքի նախագիծը քննարկման փուլում է: Մասնավորապես՝ նախատեսվում է կազմակերպել լայն քննարկում այն ծրագրերի շուրջ, որոնք պետք է խթանեն

հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը /համապատասխան քվոտաներ գործատուների համար, հնարավոր հարկային արտոնություններ, սոցիալական ձեռնարկությունների ստեղծում և այլն/:

Նոր օրենքի նախագծով և հապատասխան ենթաօրենսդրական ակտերով հնարավոր կլինի ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը և սահմանել հստակ մեխանիզմներ այդ նպատակով:

Եվ այս բոլոր գործընթացներում պետք է ներգրավված լինեն ոլորտի հասարակական կազմակերպությունները:

5. Եզրահանգումներ

Հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական ներառման առաջին նախապայմանն է՝ շրջակա միջավայրի մատչելիությունը: Ունենալով համապատասխան օրենսդրական ակտեր և նորմատիվներ, մենք չունենք հարմարեցված միջավայր:

Չնայած իրականացվող բազմաթիվ պետական և այլ ծրագրերի, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը խթանելուն, աշխատող հաշմանդամների թիվը մնում շատ փոքր:

Ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական մարմինները ընդունում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիությունը և զբաղվածությունը ԹԻՎ 1 խնդիրներն են:

Խնդրի լուծման՝ հնարավորինս մեծ թվով հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքով ապահովելու նպատակով՝ անհրաժեշտ է միավորել բոլոր կողմերի ուժերը, օգտագործել հնարավոր ռեսուրսները:

Ստորև ներկայացված են միջոցառումներ և առաջարկությունները, որոնք առանձնացվել են հարցի ուսումնասիրման ընթացքում:

6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կազմակերպել կլոր սեղան-քննարկումներ, դասընթացներ և սեմինարներ գործատուների և ոլորտի հասարակական կազմակերպությունների համար, պետական համապատասխան մարմինների և ոլորտում համապատասխան փորձառություն ունեցող արտերկրի մասնագետների ներգրավմամբ:
2. Նախաձեռնել քննարկումներ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծի առանձին դրույթների՝ մասնավորապես զբաղվածության կարգավորման վերաբերվող հոդվածների վերաբերյալ: Քննարկումներին մասնակից դարձնել նաև գործատուներին:

3. Իրականացնել հասարակական մոնիթորինգ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պայմանները սահմանող օրենսդրական ակտերի, / նորմատիվների, պահանջների/ կատարման ապահովման վերաբերյալ և մշակել համապատասխան առաջարկներ:
4. Ուսումնասիրել հեռուստատեսային հաղորդումների սուրդոթարգմանության ապահովման հնարավորությունները, առկա խնդիրները և հանդես գալ առաջարկություններով:
5. Նպաստել գործատուների գիտակցության մակարդակի բարձրացմանը և հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը:
6. Կազմակերպել և անցկացնել մրցույթներ՝ օր. „հաշմանդամություն ունեցող անձանց համար ամենահարմարեցված կազմակերպության“, լայնորեն լուսաբանել միջոցառումը:
7. Նպաստել սոցիալական ձեռնարկությունների ստեղծման գործընթացին, ապահովել իրավական դաշտը՝ օգտագործելով նաև միջազգային կազմակերպությունների հետ իրականացվող ծրագրերի հնարավորությունները:
8. Կազմակերպել հանդիպում Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների /սոցիալական, քաղաքաշինության և տրանսպորտի սպասարկման վարչությունների պետերի/ հետ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների ապահովման խնդիրները քննարկելու և լուծման հնարավոր տարբերակներ գտնելու նպատակով:

Սույն փաստաթուղթը պատրաստվել է «Լիարժեք կյանք» բարեգործական հասարակական կազմակերպության «Ամեն ինչ մեզ համար՝ մեզ հետ» ծրագրի շրջանակներում՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ: Սույն փաստաթղթում արտահայտված տեսակետները որևէ կերպ չեն արտացոլում Եվրոպական միության դիրքորոշումը:

Փորձագիտական խումբ՝
 ԱՐՄԵՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
 ՆՈՒՆԵ ՊԵՊԱՆՅԱՆ
 ՆՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
 ՍՈՒՐԵՆ ՄԱՂԱՔՅԱՆ